ՈՒՍՏԱՐԻ 2023-2024 / ANNÉE UNIVERSITAIRE 2023-2024
Փորձնական քննություններ/ Examens blancs
2-րդ կիսամյակ / 2ème semestre

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / SCIENCES SOCIALES

Քննության տևողությունը՝ 2.5 ժամ / Durée d'examen: 2.5 heures

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: *Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է 1 միավոր:* *Միայն պատասխանի, պատասխանի բացակայության, ինչպես նաև մեկից ավելի պատասխաններ նշելու դեպքում՝ 0 միավոր:*		
1.	*Ընտրել ճիշտ տարբերակը:* Բնական իրավունքը.	ա/ չգրված իրավունք է բ/ գրված իրավունք է գ/ դրական իրավունք է դ/ սուբյեկտիվ իրավունք է
2.	Աշխարհում առաջին գրավոր օրենսգիրքը.	ա/ «Ռուսկայա պրավդան» է բ/ Սալյական դատաստանագիրքն է գ/ Համմուրապիի օրենքների ժողովածուն է դ/ Դատաստանագիրքն է
3.	Իրավական կարգադրման մեթոդներն են.	ա/ հավասարակշռողը և զսպողը բ/ կարգավորողը և օրինականացնողը գ/ ինքնավարությանը և հրամայողականը դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
4.	Վարույթային իրավունքը կարգավորում է.	ա/ ընտանիքի և ամուսնության հարցերը բ/ սեփականության հարցերը գ/ հանցագործության հարցերը դ/ զուտ ընթացակարգային հարցերը
5.	Իրավունքի ամենահին ձևը.	ա/ դրական իրավունքն է բ/ սովորութային իրավունքն է գ/ օբյեկտիվ իրավունքն է դ/ պետական իրավունքն է
6.	Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է.	ա/ ՀՀ նախագահը բ/ ՀՀ վարչապետը գ/ Բարձրագույն դատական խորհուրդը դ/ ՀՀ Ազգային ժողովը

Փորձնական քննություն

7.	Դատավորներն ենթարկվում են.	ա/ ազգային ժողովին բ/ կառավարությանը գ/ գլխավոր դատավորին դ/ օրենքին
8.	ՀՀ գլխավոր դատախազը նշանակվում է.	ա/ յոթ տարի ժամկետով բ/ վեց տարի ժամկետով գ/ հինգ տարի ժամկետով դ/ չորս տարի ժամկետով
9.	Ամուսնությունը դադարում է.	ա/ դատարանի միջոցով բ/ ամուսնալուծության միջոցով գ/ ընտանիքի միջոցով դ/ բարեկամների միջոցով
10.	Պայմանագիրը.	ա/ կատարված փոստ է բ/ պարտավորություն առաջացնող բարոյական փաստ է գ/ պարտավորություն առաջացնող իրավական փաստ է դ/ պարտավորություն առաջացնող իրավական փաստ չէ
11.	Տարբեր վայրերում գտնվող կողմերի միջև պայմանագիր կնքելու երկրորդ փուլն անվանում են.	ա/ օֆերտա բ/ ակցեպտ գ/ օֆերտանտ դ/ ակցեպտանտ
12.	Պարտավորության կատարման լրացուցիչ եղանակ չէ.	ա/ գրավը բ/ երաշխիքը գ/ նախավճարը դ/ հաշվանցումը.
13.	Օրենքների ոչ պաշտոնական մեկնաբանությունը կրում է.	ա/ ցուցադրական բնույթ բ/ հետազոտական բնույթ գ/ խորհրդատվական բնույթ դ/ որոնողական բնույթ
14.	Գործարքի հիմքը.	ա/ կամքն է բ/ պարտադրանքն է գ/ հարկադրանքն է դ/ պահանջն է
15.	Կախված ծագման հիմքերից պարտավորությունները լինում են.	ա/ երկու տեսակ բ/ երեք տեսակ գ/ չորս տեսակ

Փորձնական Բնագիր

		դ/ հինգ տեսակ
16.	Նախավճարի մասին համաձայնությունը կնքվում է.	ա/ գրավոր և բանավոր բ/ գրավոր գ/ բանավոր դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
17.	Իրավական պատասխանատվության սկզբունք չէ	ա/ օրինականության սկզբունքը բ/ անհատականացման սկզբունքը գ/ մարդասիրության սկզբունքը դ/ կրկնակի կիրառման սկզբունքը
18.	Միջանկյալ դատական ակտը կարող է բողոքարկվել այն ստանալու պահից.	ա/ տասն օրյա ժամկետում բ/ տասնհինգ օրյա ժամկետում գ/ քսան օրյա ժամկետում դ/ մեկ ամսյա ժամկետում
19.	Եվրոպական դատարանի դատավորների լիազորությունները դադարում են.	ա/ եթե լրանում է յոթանասունհինգ տարին բ/ եթե լրանում է վաթսուն տարին գ/ եթե լրանում է վաթսունհինգ տարին դ/ եթե լրանում է յոթանասուն տարին
20.	Իրավական կարգավորումն իրականացնում է.	ա/ պետությունը բ/ ոստիկանությունը գ/ դատախազությունը դ/ դատարանը
21.	Իրավական կարգավորման տիրույթում գտնվող հասարակական հարաբերությունները կազմում են.	ա/ իրավական կարգավորման մեթոդը բ/ իրավական կարգավորման առարկան գ/ իրավական կարգավորման ինստիտուտը դ/ իրավական կարգավորման նորմերը
22.	Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիրը ընդունվել է.	ա/ 1950 թվականին բ/ 1959 թվականին գ/ 1996 թվականին դ/ 1987 թվականին
23.	Մարդու իրավունքների եվրոպական դատարանն առաջին հերթին լուծում է.	ա/ դիմումների ընդունման հարցը բ/ նիստերի անցկացման հարցը գ/ դատավորների հարցը դ/ պաշտոնական ձևաթղթի հարցը
24.	Միասեռ հասարակական հարաբերությունների որոշակի կողմ կարգավորում է.	ա/ իրավունքի մեթոդը բ/ իրավունքի ինստիտուտը գ/ իրավունքի նորմը

		դ/ իրավունքի ճյուղը
25.	Գիտական հայտնագործությունը.	ա/անհրաժեշտ իրավաչափ վարքագիծ է բ/ թույլատրելի իրավաչափ վարքագիծ է գ/ ցանկալի իրավաչափ վարքագիծ է դ/ պարտադիր իրավաչափ վարքագիծ
26.	Վճռաբեկ դատարանի նպատակն է.	ա/ օրենքի կիրառման ապահովումը բ/ օրենքի միատեսակ կիրառությունը գ/ օրենքի պաշտպանությունը դ/ օրենքի կարգավորվածությունը
27.	ՀՀ փաստաբանների պալատն ունի.	ա/ հանրային պաշտպանի գրասենյակ բ/ երեխաների պաշտպանի գրասենյակ գ/ հասարակական պաշտպանի գրասենյակ դ/ քաղաքական պաշտպանի գրասենյակ
28.	Արդի պետության կառուցակարգի սկզբունքներից չէ.	ա/ ժողովրդաիշխանությունը բ/ օրինականությունը գ/ արհեստավարժությունը դ/ հիմնավորվածությունը
29.	Ո՞վ է առաջին անգամ ձևակերպել պետական իշխանությունը օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև բաշխելու սկզբունքը:	ա/ Կ.Մարքսը բ/ Ժ.Մոնտեսքյոն գ/ Ֆ.Ռատցելը դ/ Կ. Հարտլանդը
30.	Հայաստանում բոլշևիկները իշխանության եկան.	ա/ 1919թ. բ/ 1918թ. մայիսի 28-ին գ/ 1920թ. դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
31.	Ո՞ր դարից է Մեծ Բրիտանիան դարձել խորհրդարանական միապետություն:	ա/ 19դ. բ/ 20դ. գ/ 18դ. դ/ 20-րդ դարի երկրորդ կեսից
32.	Ի՞նչ է պայմանագիրն ըստ էության:	ա/ հակասություն բ/ հարաբերություն գ/ համաձայնություն դ/ հաշվետվություն
33.	Հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված քաղաքացու կնքած գործարքը.	ա/ առ ոչինչ է բ/ վիճահարույց է գ/ կեղծ է դ/ շինծու է

34.	Ե՞րբ է Եվրոպայի խորհուրդն ընդունել «Մահապատժի վերացման մասին»փաստաթուղթը:	ա/ 1963թ. բ/ 1973թ. գ/ 1983թ. դ/ 1993թ.
35.	Կուսակցությունների մասին առաջին անգամ հիշատակվել է.	ա/ ԱՄՆ-ի սահմանադրության մեջ բ/ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում գ/ Մարդու և քաղաքացու հիմնական ազատությունները փաստաթղթում դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
36.	Ազատականության սկզբունքների ջատագով չէ.	ա/ Ռ.Ռեյգանը բ/ Ի.Կանտը գ/ Ջ.Լոքը դ/ Թ.Ջեֆերսոնը
37.	Իրավական պատասխանատվության գործառույթ չէ.	ա/ զրկող-պատժող բ/ վերականգնող-հատուցող գ/ կանխող-դաստիարակող դ/ վերականգնող-հաստատող
38.	Ազգային կուսակցություններից ժամանակագրական առումով առաջինը ստեղծվել է.	ա/ ՍԴ հնչակյան կուսակցությունը բ/ Հայ հեղափոխական դաշնակցությունը գ/ Արմենական կուսակցությունը դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
39.	Հայաստանի անկախության մասին հռչակագիրն ընդունվել է.	ա/ 1991թվականի օգոստոսի 23-ին բ/ 1990թվականի օգոստոսի 23-ին գ/ 1995թվականի օգոստոսի 23-ին դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
40.	Ամուսնությունն արգելվում է.	ա/ այն անձանց միջև, որոնցից թեկուզ մեկն արդեն այլ ամուսնության մեջ է գտնվում բ/ այն անձանց միջև,որոնք ամուսնալուծված են գ/ այն անձանց միջև,որոնք դատապարտված են եղել դ/ այն անձանց միջև, որոնցից մեկն ամուսնալուծվել է
41.	Քաղաքական գիտակցությունը չի կատարում.	ա/ կարգավորիչ գործառույթ բ/ ճանաչողական գործառույթ գ/ գնահատողական գործառույթ դ/ տեղեկութային գործառույթ
42.	Քաղաքագիտական միտքը մշակել է օտարվածության հաղթահարման	ա/«մասնակցության ժողովրդավարություն» բ/ «մասնակցության ժողովրդականություն»

Փորձնական ընտրություն

	հայեցակարգ, որն անվանում են.	գ/ «մասնակցության ժողովականություն» դ/ «մասնակցության ժամանակացույց»
43.	Ազատականություն կամ.	ա/ լիբերալիզմ բ/ լեյբոլիզմ գ/ լլուդիզմ դ/ լառիզմ
44.	Սոցիալիստական գաղափարախոսության տեսական հիմքը.	ա/ Ջ.Լոքի ուսմունքն է բ/ Շ.Մոնտեսքոյի ուսմունքն է գ/ Կ. Մարքսի ուսմունքն է դ/ Ճիշտ պատասխանը բացակայում
45.	Նոտարական ձևը չպահպանելը.	ա/ հանգեցնում է գործարքի կայացմանը բ/ հանգեցնում է գործարքի առոչնչության գ/ հանգեցնում է գործարքի կնքման դ/ հանգեցնում է գործարքի չեղարկման
46.	Ազատականությունը որպես ուղղություն,ենթադրում է.	ա/ անձի ազատությունը, սեփականությունը, անձեռնմխելիությունը բ/ հասարակության աստիճանակարգված կառուցվածքը գ/ փոխզիճումը և գոյություն ունեցող կարգերի պաշտպանությունը դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
47.	Որտե՞ղ է ընդունվել«Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների մասին եվրոպական համաձայնագիրը.	ա/ Հաագա բ/ Հռոմ գ/ Ստրասբուրգ դ/ Բեռլին
48.	Ո՞վ է «Օրենքների ոգու մասին» աշխատության հեղինակը։	ա/ Ժան Բոդեն բ/ Պոլ Վիդալ Բլաշ գ/ Դենի Դիդրո դ/ Շարլ Մոնտեսքիո
49.	Ո՞վ է «Պատմության ուսումնասիրության դյուրին մեթոդը» աշխատության հեղինակը։	ա/ Ժան Բոդեն բ/ Շարլ Մոնտեսքիո գ/ ժան-ժակ Ռուսո դ/ Ճիշտ պատասխանը բացակայում է
50.	Ո՞վ է «Ի պաշտպանություն ազգային շահի» աշխատության հեղինակը։	ա/ Ժան Բոդեն բ/ Շարլ Մոնտեսքիո գ/ Հենրի Մորգենթաու դ/ Պոլ Վիդալ Բլաշ

Փրոնսպան Բլոգ

51.	Վատիկանը դիվանագիտական կապեր ունի.	ա/ ավելի քան 60 երկրների հետ բ/ ավելի քան 80 երկրների հետ գ/ ավելի քան 50 երկրների հետ դ/ ավելի քան 70 երկրների հետ
52.	Միջազգային վեճերի լուծման ո՞ր միջոցն է հանդիսանում երրորդ կողմի գործունեություն՝ վիճող կողմերի միջև անմիջական շփումներ հաստատելու համար:	ա/ միջազգային բանակցությունները բ/ փաստերի հաստատումը գ/ բարի ծառայությունը դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
53.	Ըստ այս տեսության՝ սոցիալիզմին պետք է փոխարինի կոմունիզմը.	ա/ լիբերալիզմ բ/ մարքսիզմ գ/ կոնսերվատիզմ դ/ նացիոնալիզմ
54.	Եվրոպական միության անդամ պետություն չէ.	ա/ Լուքսենբուրգը բ/ Շվեդիան գ/ Հունգարիան դ/ Վատիկանը
55.	Ե՞րբ սկսվել առաջին աշխարհամարտը.	ա/ 1918թ. բ/ 1914թ. գ/ 1939թ. դ/ 1945թ
56.	Ժառանգատու կարող է լինել.	ա/ իրավաբանական անձը բ/ ֆիզիկական անձը գ/ հասարակական կազմակերպությունը դ/ քաղաքական կազմակերպությունը
57.	ԱՄՆ անկախության հռչակագիրն ընդունվել է.	ա/ 1787թ. բ/ 1776թ. գ/ 1797թ. դ/ 1791թ.
58.	Մարդու երրորդ սերնդի իրավունք է.	ա/ հաղորդակցվելու իրավունքը բ/ կյանքի իրավունքը գ/ սեփականության իրավունքը դ/ ազատության իրավունքը
59.	Օրենքներն օժտված են.	ա/ բարձրագույն հասարակական ուժով բ/ բարձրագույն իրավաբանական ուժով գ/ բարձրագույն քաղաքական ուժով դ/ բարձրագույն բարոյական ուժով

Փորձնական բնույթով

60.	Սաարի մարզը վիճելի տարածք էր.	ա/ Գերմանիային և Լեհաստանի միջև բ/ Ֆրանսիայի և Լեհաստանի միջև գ/ Գերմանիայի և Ֆրանսիայի միջև դ/ Ֆրանսիայի և Անգլիայի միջև
Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը՝ 2 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0 միավոր:		
61.	Ստորև նշված օրինակը միջազգային իրավական պատասխանատվության ո՞ր ձևին է պատկանում «Իրավախախտ պետությունից ապրանքների ներկրման արգելք (էմբարգո)»:	ա/ ռեպարացիա բ/ սուբստիտուցիա գ/ ռեպրեսալիա դ/ ռեստորացիա
62.	*Ներկայացված տարբերակներից ո՞րն է սխալ.* Ժառանգության իրավունքի վկայագիրը ժառանգներին տրվում է՝	ա/ ժառանգության բացման վայրի նոտարին ներկայացված գրավոր դիմումի հիման վրա բ/ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձևաթղթի վրա գ/ ժառանգության բացման օրվանից վեց ամիս հետո դ/ ժառանգներից յուրաքանչյուրին առանձին-առանձին
63.	Նշված պնդումներից որն է ճիշտ.	ա/ Ֆրանսիացի Ժան Բոդեն իր «Պատմության աշխարհագրական առանցքը» գրքում բացատրում է բնակչության,պետության, քաղաքականության և բնական միջավայրի միջև կապը: բ/ «Օրենքներ ոգու մասին» և «Աստրախանի հայերի դատաստանագիրքը» թվագրրվում է նույն թվականին՝ 1748: գ/ Ալֆրեդ Մեխենը առավելություն է տալիս պետության ծովային դիրքին: դ/ Մեծ տարածքների գաղափարի հեղինակը Հելֆորդ Մաքինդերն է:
64.	Ստորև թվարկվածներից ո՞րը ճիշտ չէ. Ամուսիններից մեկի դիմումի	ա/ դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող բ/ դատարանի կողմից ճանաչվել է սնանկ

	հիման վրա ամուսնալուծությունը կարող է կատարվել Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում եթե մյուս ամուսինը՝	գ/ դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ դ/ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով
65.	Ներկայացված տարբերակներից ո՞րն է սխալ.	ա/ աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ բ/ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն աշխատողի իրավաբանական անձի կարգավիճակ ունենալու կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված լինելու հանգամանքը գ/ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը դ/ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները
66.	Հանգամանքները և անձանց շրջանակը, որոնց առկայության դեպքում նորմը սկսում է գործել, այսինքն՝ սուբյեկտների մոտ ծագում են իրավունքներ և պարտականություններ կոչվում է.	ա/ հիպոթեզ (կարգադրություն) բ/ դիսպոզիցիա (հարկադրանք) գ/ սանկցիա (կարգադրություն) դ/ հիպոթեզ (ենթադրություն)
67.	Պատասխանատվության մեկանգամյա կիրառման սկզբունքը ենթադրում է, որ.	ա/ միևնույն հանցագործության համար անձը կարող է դատապարտվել մի քանի անգամ օրենքով սահմանված դեպքերում բ/ գործի վերանայումը արգելված է գ/ նոր հանգամանքների ի հայտ գալը հիմք է, որ գործը վերանայվի հին դատավճռի որոշման հիման վրա դ/ գործի վերանայումը արգելված չէ, սակայն միայն հին դատավճռի կամ որոշմն վերացման դեպքում
68.	Նշված պնդումներից որն է ճիշտ.	ա/ Պետական հարկադրանքը չունի կամայական, հայեցողական բնույթ բ/ Վանի թագավորությունը կրոնապետություն էր, որն ուներ կառավարման դուալիստական ձև

		գ/ Դասային ներկայացուցչական կառավարման ձևում միապետի իշխանությունը սահմանափակվում էր դասերի ներկայացուցչական մարմնով, օրինակ Լեհաստանում՝ պառլամենտով դ/ Պետության գործառույթների շրջանակը պայմանավորված է պետական իշխանության ցանկություններով
69.	Նորմատիվ իրավական ակտերը կազմում են.	ա/ միասնական կենտրոնացված համակարգ բ/ միասնական ստորակարգված համակարգ գ/ միասնական հավասարաչափ համակարգ դ/ միասնական քարացած համակարգ
70.	Նշվածներից ո՞ր տարբերակում է միջազգային իրավական քաղաքական պատասխանատվության ձևը համապատասխանում օրինակին.	ա/ ռեպրեսալիա (օրինակ՝ իրավախախտ պետությունից ապրանքների ներկրման արգելք՝ (էմբարգո)) բ/ ռետորսիա (օրինակ՝ ջրի որակի և մաքրության վերականգնում, որ կեղտոտվել էր իր մեղքով) գ/ ռեստորացիա (օրինակ՝ պաշտոնական ներողություն խնդրելը) դ/ սատիսֆակցիա (օրինակ՝ մաքսային տուրքերի բարձրացումն այդ պետության ապրանքների համար)
Չորս բաղադրիչով հարց-առաջադրանքներ ***Գտնել ճիշտ կապերն ու համապատասխանությունները աջ և ձախ սյուներում տրված հասկացությունների, երևույթների միջև:*** ***Պատասխանները գրանցել առաջադրանքից հետո զետեղված աղյուսակում՝ համապատասխան թվի տակ նշելով ճիշտ պատասխանի տառը:*** *Պատասխանի ներկայացման այլ տարբերակները չեն գնահատվելու:* *Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասխանը՝ չորս միավոր:*		

71. Համապատասխանեցնել պետական կառավարման տեսակները ձևերին։

1. Արդի հանրապետություն	ա. Արիստոկրատական
2.Սահմանափակ միապետություն	բ. Դուալիստական
3. Հին և միջին դարերի հանրապետություն	գ. Հին արևելյան միահեծանություն
4. Անսահմանափակ միապետություն	դ. Սոցիալիստական

1	2	3	4

72. Համապատասխանեցնել քաղաքական գիտակցության գործառույթներն և քաղաքական դիրքորոշման բաղադրատարրերը։

1. Վարքագծային բաղադրատարր	ա. Գործելու պատրաստակամություն
2. Ճանաչողական գործառույթ	բ. Մարդու աշխարհայացք և քաղաքական իդեալ
3. Գնահատող գործառույթ	գ. Որոշակի հուզական վերաբերմունք քաղաքական տարբեր կողմերի և երևույթների նկատմամբ
4. Տեղեկութային բաղադրատարր	դ. Որոշակի քաղաքական գիտելիքների ձեռքբերում

1	2	3	4

Փորձնական բնագիր

73. Համապատասխանեցնել բովանդակությունը բարոյագիտության կանոններին, ընկալումներին և տեսություններին:

1. «Յուրաքանչյուրը պետք է առաջնորդվի այնպիսի կանոններով , որոնք կարող են բերել առավելագույն բարիք բոլոր շահագռգված անձանց»:	ա. Էգոիզմի ընկալում
2. «Վարվիր այնպես, որ քո անձնական շահը ծառայի ուրիշների շահերին»:	բ. Ի. Կանտի բարոյական պարտքի տեսություն
3. «Բոլորը պետք է հետամուտ լինեն իրենց շահերի իրագործմանը»:	գ. Չափավոր ալտրուիզմի կանոն
4. «Գործիր միայն այն նորմի համաձայն, որով առաջնորդվելիս միաժամանակ կուզիր, որ այն դառնա համընդհանուր օրենք»:	դ. Կանոններով առաջնորդվող բարոյական օգտապաշտություն

1	2	3	4

74. Ամբողջացնել դատողությունը՝ ընտրելով ճիշտ շարունակությունը:

1. Վարչապետ չընտրվելու դեպքում, նոր ընտրությանը մասնակցելու իրավունք ունի այն թեկնածուն, որը առաջադրվել է	ա. ԱԺ պատգամավորների առնվազն 1/4 կողմից
2. ՀՀ խորհրդարանը կազմված է	բ. ԱԺ պատգամավորների առնվազն 1/3 կողմից
3. ՀՀ նախագահի թեկնածու լինելու իրավունք ունի այն թեկնածուն, որը առաջադրվել է	գ. Առնվազն 101 պատգամավորից
4. ՀՀ նախագահի պաշտոնը զբաղեցնում է այն թեկնածուն, որն ընտրվել է	դ. ԱԺ պատգամավորների առնվազն 3/4 կողմից

1	2	3	4

Փորձնական բնույթով

75. Համապատասխանեցնել բարիքների տեսակները աջ սյունակում տրված բնութագրերին:

1. Խմբային բարիք	ա. Ոչ մրցակցային, չզատվող
2. Ընդհանուր բարիք	բ. Մրցակցային, զատվող
3. Մասնավոր բարիք	գ. Ոչ մրցակցային, զատվող
4. Հանրային բարիք	դ. Մրցակցային, չզատվող

1	2	3	4

Փորձնական բնույթյուն